ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/196

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Մասնակից՝ «Հայկ Հովսեփյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ներկայացուցիչ՝ Ժ. Դադիյանի
«Հայկ Հովսեփյան» Ա/Ձ-ի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀ-ԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնանշման հարցում, կրծքանշանների և պատկերով տպագրվող նյութերի ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ոառումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13697-2020 գրությամբ «Հայկ Հովսեփյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու) 31.08.2020թ. թիվ 1-06/34Ա/530-20 գրության հիման վրա, 10.09.2020թ.-ին «Հայկ Հովսեփյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 10.09.2020թ.-ին

Բողոքներ քննող անձի 10.09.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/196 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

16.09.2020թ.-ին և 25.09.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.09.2020թ.-ին:

2. «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը 31.08.2020թ. թիվ 1-06/34Ա/530-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀ-ԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Հայկ Հովսեփյան Ա/Ձ-ն (այսուհետ՝ Ընտրված մասնակից) խախտել է

գնման գործընթացի շրջանակում իր ստանձնված պարտավորությունները, մասնավորապես որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Գնման ընթացակարգի շրջանակներում, անգործության ժամկետի ավարտից հետո՝ սույն թվականի օգոստոսի 3-ին Ընտրված մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս պատճառաբանելով գնային առաջարկում տեղ գտած վրիպակը, մինչև սույն թվականի օգոստոսի 24-ը ներառյալ (քանի որ Գնման ընթացակարգի շրջանակներում նախատեսված է եղել կանխավճարի տրամադրում, պայմանագիրը ստորագրելու և ներկայացնելու համար նախատեսված ժամկետը սահմանվել է 15 աշխատանքային օր) չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը, և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀ-ԱՊՁԲ-20/29» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հայկ Հովսեփյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Հայկ Հովսեփյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.07.2020թ.-ի գրությամբ դիմել է «Հայկ Հովսեփյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13697-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, ներկայանալով հրավիրված նիստին, բանավոր կերպով ներկայացրել է իր առարկությունները նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից ներկայացված հիմքերի վերաբերյալ և հայտնել, որ սխալմամբ 7-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է ցածր գնային առաջարկ:

4. <u>ՍՑ-LO-2020/196 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կրծքանշանների և պատկերով տպագրվող նյութերի ապրանքների ձեռքբերման նպատակով 03.07.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀ-ԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-12-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Հայկ Հովսեփյան» Ա/Ձ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀ-ԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.07.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթները, ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից է ճանաչել «Հայկ Հովսեփյան» Ա/Ձ-ին: Ընթացակարգի շրջանակում սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր: Անգործության ավարից հետո որոշվել է ծանուցել հաղթող մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկով և ներկայացնել պայմանագրի կատարման և որակավորման ապահովման պահանջ՝ համաձայն Կարգով ներկայացված Ընթացակարգի:

v. Պատվիրատուն 03.08.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀ-ԱՊՁԲ-20/29» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում պատվիրատուին

ներկայացնել Մասնակցի կողմից կնքված պայմանագիրը, որակավորման ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով և պայմանագրի կատարման ապահովում:

vi. «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 03.09.2020թ.-ին՝ 31.08.2020թ.-ի թիվ 1-06/34Ա/530-20 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13697-2020 գրությամբ «Հայկ Հովսեփյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից կրծքանշանների և պատկերով տպագրվող նյութերի ապրանքների ձեռքբերման նպատակով 03.07.2020թ.-ին հայտարարված «ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀ-ԱՊՁԲ-20/29» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-12-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած «Հայկ Հովսեփյան» Ա/Ձ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.07.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության հիման վրա ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է հաղթող մասնակից: Պատվիրատուն 03.08.2020թ.-ին Մասնակցին ներկայացրել է «ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀ-ԱՊՁԲ-20/29» ծածկագրով պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս մինչև 24.08.2020թ.-ը ներառյալ չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը, ուստիև համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 24.08.2020թ.-ին՝ պայմանագիր կնքելուց հրաժարվելու հիմքով, սակայն «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 03.09.2020թ.-ին՝ 31.08.2020թ.-ի թիվ 1-06/34Ա/530-20 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ: Ընդ որում, սույն դեպքում պետք է ի նկատի ունենալ, որ նշված գրությունը, թվագրված է 31.08.2020թ.-ով, սակայն առաքանին փոստային ծառայության թիվ 0047 բաժանմունք է հանձնվել 03.09.2020թ.-ին, իսկ ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 07.09.2020թ.-ին՝ փոստային ծառայության միջոցով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ

իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-*

Հայաստան բանկ» Ա/Ձ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13697-2020 գրությամբ «Հայկ Հովսեփյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/196 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**